ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՅՍ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ Ս. ԵԿԵՂԵՑԻՈՅ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ.

—

(Շ-ր-Ն-ի. Ա-ր-ա-ա, Բ. ԺԱ.).

Յովսէփ կաթուղիկոսի ժամանակ*) Պարսկաստանում թագաւորում էր Յազկերտ Բ. որի հաղարապետն էր Միհրներսէհ անուն մի խորամանկ և քաղաքագէտ պարսիկ։ Միհրներսէհ աչքի առաջ ունենալով Պարսից լայնածաւալ տէրութիւնը կազմող բազմազան, բազմալեզու և այլակրօն հպատակները՝ մտածումէր բոլորին էլ Զրադաշտական կրօնին դարձնելով Պարսիկների հետ ձուլել, որ տէրութեան ներքին բարգաւաճմանը խոչընդոտն չը լինեն և այս պատճառով էլ խորհուրդ էր տալիս Յազկերտին իւր այս մտադրութիւնը շուտով ի գլուխ բերելուն ձեռնարկել։ Հենց այն ժամանակ Սիւնեաց իշխան Վասակ մարզպանի փեսան Վարազվաղանը, որ իւր կնոջ հետ լաւ չը լինելուն համար իւր աներից փախստական ապաւինել էր Պարսից դռանը՝ գրգռումէր Միհրներսէհին շուտով սկսել ինչ որ մտածել է. այս անումէր Վարազվաղան համարելով որ, եթէ յաջողի Հայերին մազդեզանց կրօնին դարձնել՝ ինքն որպէս այդ բանին խորհրդատու՝ մեծ պատուի կը հասնի, և եթէ չի յաջողիլ, գոնէ յուզուած խռովութեանը զոհ կը գնայ Վասակ՝ որ իւր ունեցած պաշտօնով ներգործող դեր խաղալու էր. իսկ Վասակի կորստեամբ ինքն ազատուած կը լինէր նորա հալածանքից։

Միհրներսէհ Վարազվաղանից դրդուած՝ քրէստոնեաներին մազդեզանց կրօնին դարձնելու համար Յազկերտին համոզումէր ասելով. «Տէրերը ոչ միայն իրանց ծառաներից ստացած շահերի, այլ և նոցա հոգւոց փրկութեան համար էլ պէտք է հոգան». և խօսքը Հայոց աշխարհի կարևորութեան վերայ դարձնելով ասումէր. «Դուք ինքներդ (Յազկերտ) և բոլոր Արեայց աշխարհը գիտէք թէ ինչպէս մեծ ու պիտանի է Հայոց աշխարհը, որ մօտ ու սահմանակից է կայսեր իշխանութեանը և Յունաց օրէնքն ու պաշտա-

---

(*) Եղիշէ «Հիւսուածք» Պ. Կ. Կոստանեան։

մունքն ունի. ԷՐԷ ԴԷ (Պարսից) օրէնքէն ընդունէցնէ+ նոցա, յէլ և Աքէաց աշխարհն էլուէրէն, և երբ որ հայերը սրտով մերը լինին, Վրացիներն ու Աղուանները մերն են ու մերը»։ Խորհրդի կոչուած մոգերն ու մոգպետներն էլ հաստատեցին Միհրներսէհի խորհուրդը։ Առհասարակ Պարսից աւագանու կարծիքն էր որ, եթէ բոլոր հպատակները մի կրօնով միանան Պարսից հետ՝ տէրութիւնը այնպէս կըզօրանայ, որ Յոյներն էլ կըհպատակին։ Յազկերտ անասելով իւր հազարապետի և մոգերի խորհրդին՝ քրիստոնեայ երկիրները անպաշտպան թողնելու համար տեղւոյն զինուորներին մեծամեծների հետ հրաւիրեց Ապար աշխարհը Քուշանաց դէմ՝ պատերազմելու պատրուակով. երբ որ յաղթեց Քուշաններին, հրամայեց բոլոր քրիստոնեայ զօրականներին Պահ դրան մէջ փակել՝ պատուիրելով որ դրսից ներս եկողներին՝ թոյլ տան, իսկ ներսից դուրս գնալ ցանկացողներին՝ արգելեն։

Քրիստոնեայ զօրականներին Պահ դրան մէջ այսպէս փակելուց և նեղը ձգելուց յետոյ Յազկերտ առաջարկեց նոցա որ Մազդեզանց կրօնին դառնան. դիմադրողներին չարաչար տանջում՝ և սպառնում էր հեռաւոր երկիրներ. հաւատուրաց, բանտարկու և ստորաքարշ մարդկանց մեծամեծ՝ պատուի էր հասցնում, իսկ աւաքինի և մեծանուն նախարարներին՝ յետին անարգութեան։ Այս անդթութեան երեսից կամեցան խոյս տալ Ատոմ Գնունին և Մանաճիհր Ռշտունին իրանց զօրքերով Հայաստան փախչելով, բայց բոլորն էլ նահատակուեցին Պարսից զօրքերից. այս նահատակների ոսկն է որ ոսկում է մեր եկեղեցին Ատոմեանց զօրավարաց անունով։

Յազկերտ հարկերը բաշխելու և ձիաւոր զօրքերի թիւը նուազեցնելու պատրուակով՝ Դենշապուհ Պարսիկ իշխանին ուղարկեց Հայաստան՝ աշխարհագիր անելու։

Դենշապուհ ազատ եկեղեցին և միայնակեացների վանորայքը հարկի տակ դրեց, երկրի հարկը աւելի ծանրացրեց, նախարարներին միմեանց հետ բանտարկութեամբ թշնամացրեց և ամեն տան մէջ խռովութիւն ձգեց։ Եւ այս անումէր, որ թերևս կարողանայ Հայոց միաբանութիւնը քանդել, եկեղեցւոյ ուխտը ցրուել, միայնակեացներին փախցնել և շինականներին թշուառացնել. որպէս զի յետին ազգատութեան մէջ ընկնելով՝ զրադաշտական օրէնքին դարձնի բոլորին։ Պաշտօնական արեց Վահան Ամատունուն՝ որ երկրի հազարապետն էր և հայրական խնամքով էր կա-

ռավարում աշխարհը, և տեղը մի պարսիկ կարգեց. դատաստանական գործը, որ հոգևորականներն էին վարում՝ նոյանից առաւ, և մի մոգպետ դատաւոր նշանակեց, որ կարողանայ եկեղեցու փառքը նսեմացնել։

Կրկնապատիկ հարկ էին առնում նոյն ինքն եպիսկոպոսներից և երէցներից. ոչ միայն շէն տեղերի, այլ և աւերակների համար էլ հարկ էին ստանում, ոչ եթէ արքունի արժանաւորութեան համեմատ, այլ աւազակաբար յափշտակելով. այնպէս որ, իրանք էլ մեծապէս զարմանում էին և ասում. «Հայաստան աշխարհը, որ տեղից այսքան գանձ է դուրս գալիս, ինչպէս է շէն մնում»։

Այս ամեն չարիքը հասցնում էին, բայց եկեղեցուն դեռ յայտնապէս չէին դիպել. սակայն երբ տեսան թէ իրանց նպատակի համար այս բաները չօգնեցին, այն ժամանակ թագաւորի հրամանով Միհրներսէհ հազարապետը մոգերին և մոգպետներին իրանց կրօնին համեմատ մի թուղթ գրել տուեց և ուղարկեց Հայաստան։

Այս թղթով Միհրներսէհ մանրամասնաբար գրում էր դենի մաղդեղն կրօնի հաւատալիքը, որ է. Զրուան մեծ աստուածը երկինքն ու երկիրը ստեղծելու համար հազար տարի յաշտ էր անում և ասում «թերևս կը լինի ինձ մի որդի Որմիզդ անունով, որ կը ստեղծի երկինքն ու երկիրը» և յղանում է երկուորեակ, «մինը յաշտ առնելուն, իսկ միւսը կասկածելու համար։ Ասում է Զրուան. «որը վաղ ծնուի՝ նորան կը տամ թագաւորութիւնը». Արիմն, որ կասկածանքից էր յղացուած՝ պատռում է Զրուանի որովայնը դուրս է գալիս և կեղծում թէ ինքն է Որմիզդ. իսկ Զրուան նորա խաւարային և չարասէր լինելուց գուշակելով հանդերձ որ նա Որմիզդ չէ, այնու ամենայնիւ տալիս է նորան թագաւորութիւնը հազար տարի. ծնվում է և Որմիզդը, Զրուան թագաւորութիւնը Արիմնից հանելով տալիս է Որմզդին՝ որ ստեղծելով երկինքն ու երկիրը և բոլոր բարի բաները՝ համարվում է բարի աստուած, իսկ Արիմն ստեղծելով գեւերն ու բոլոր չար բաները՝ համարվում չար աստուած։

Որովհետև դենի մաղդեղն օրէնքի սկզբունքը հիմնուած է աստուծոց երկուութեան վերայ, որ են բարի աստուած և չար աստուած,—հետևաբար Միհրներսեհ իւր թղթով կշտամբում էր քրիստոնէութիւնը՝ մատնանիշ լինելով Ա. միոյն Աստուծոյ բոլոր արարածների և մահու ու կենաց արարիչ համարելը. և նախատինքներ պատուիրանազանցութեան համար նոցա մահուան դատա-

պարտելը՝ ասելով. «Զայսպիսի նախանձ և ոչ մարդ առ մարդ ունի, թող թէ Աստուած առ մարդիկ»։

Բ. Կշտամբումէին սուրբ կոյս Մարիամից Յիսուսի Քրիստոսի ծնունդը, նորա խաչելը, թաղելը, յարութիւն առնելը և երկինք համբառնալը, ասելով. «Դեռ որ յարքն են՝ ոչ ըմբռնին և տանջին ի մարդկանէ, թող թէ Աստուած արարիչ ամենայն արարածոյ»։

Գ. Կշտամբումէին հոգևորականներին՝ որ նոքա միս չեն ուտում, ամուսնացեալ չեն, աղքատութիւն և հանդերձի անշքութիւն են սիրում. մահը գովումեն, կեանքը պարսաւում և այլն. առ այս գրումէր. «Եւ եթէ լսէք զոգայ, և ի կանայս ոչ մերձենայք, աշխարհիդ վախճան վաղվաղակի հասանէ»։

Հայերը այս նամակին կամ կէտ առ կէտ պէտք է պատասխան տային, կամ Պարսկաստան—արքունիք՞ գնային։ Ուստի Ս. Յովսէփ Արտաշատ քաղաքում 449 թ. ժողով գումարեց, որին ներկայ էին բոլոր եպիսկոպոսները, շատ քորեպիսկոպոսներ և զանազան տեղերից երէցներ՝ եկեղեցու սուրբ ուխտով հանդերձ. մեծամեծ նախարարների և բոլորի հաւանութեամբ ժողովում գրուեց Միհրներսեհի թղթի պատասխանը, որի մէջ զօրաւոր փաստերով ապացուցանումէին թէ մի է ճշմարիտն Աստուած, թէ նա ստեղծեց երկինքն ու երկիրը և բոլոր արարածները. թէ Աստուծոյ արարածների մէջ չար չը կայ, այլ ինչպէս լուսոյ բացակայութեան հետևանքն է դատարկութեան խաւարը, որ գոյութիւն չունի, նոյնպէս և բանական արարածների ազատակամ իրանց բնական բարւոյն հակառակ գործածն է չարութիւն. թէ նախաստեղծների պատուիրանազանցութիւնը պատուհասեց արդարադատն Աստուած, բայց և ընկած մարդկութիւնը փրկելու համար իբրև ամենաբարի հայր ուղարկեց իւր որդին և բանն Յիսուս Քրիստոս՝ որ սուրբ կոյս Մարիամից ծնունդ առաւ՝ մարդոց մէջ մարդկաբար գործելու և մարդկան փրկութիւնը հնարաւորելու համար։

Այդ պատասխանի մէջ սուրբ Յովսէփ Հայոց աշխարհի կողմից գրումէր թէ, սուրբ գրքից խրատուած են հնազանդել մարմնաւոր իշխաններին ոչ միայն իրանց ինչքն ու ստացուածքը, այլ և իրանց և իրանց որդւոց արիւնը յանձնելով նոցա տնօրէնութեանը, միայն թէ նոքա միայն աշխարհի շինութեան և խաղաղութեան համար հոգային, իսկ ժողովրդի հոգւոյ փրկութեան հոգից հեռու

մնային, առ այս գրելով. «Բայց վասն հոգւոյ մերոյ զձեզ ինչ ամենևին այդ հոգս մի աշխատեսցէ և վասն պարգևի և պատուհասի, որ երկնչիցդ յաստուծոյդ, ի մեր անձինս և յոգիս յԱստուծոյ օգուան այն կամ պատիժ» (Ղազար Փարպ.)։ Ս. Ցովսէփ յայտնումէր թէ՝ հայերը ճանաչելով ճշմարիտ և մի Աստուծուն, որ ստեղծել է երկինքն ու երկիրը և նոցա միջի արարածները, տարերքներին, արեգակին և լուսնին ծառայելու չեն։

Ս. Ցովսէփ հերքումէր զրադաշտական կրօնի թիւր վարդապետութիւնները, հեգնելով Որմզդի և Արհմնի ծնունդը Զրուանից և չարի ու բարւոյ առանձին առանձին աստուածլինելու սկզբունքը, ասելով. «Եթէ մահը չար աստուածը ստեղծեց՝ ուրեմն բարի աստուծոյ արարածը խանգարեց. եթէ այդ այդպէս՝ ուրեմն նորան չէ կարելի բարի աստուած համարել, այլ ապականացու կիսագործ. և որ աստուծոյ արարածները ապականելի ու եղծանելի են՝ նորան անեղծ աստուած չէ կարելի ասել. մի աշխարհի երկու դեհապետներ չեն լինիլ և ոչ մէկ արարածին՝ երկու աստուածներ. եթէ համարձակուին և մի աշխարհի երկու թագաւորներ լինին՝ աշխարհը կը փչանայ և թագաւորութիւնը կը խանգարուի»։ Ի նկատի ունելով գործերի դրութիւնը ժողովը իւր այս թղթով գրումէր Միհրներսէհին։ «Այս հաւատից մեզ ոչ ոք չի կարող խախտել, ոչ մարդիկ, ոչ սուր և ոչ հուր. մեր բոլոր ստացուածքը քո ձեռքին են և մեր մարմինը քո առաջին է. քո կամքի համեմատ արա ինչ որ կամենումես։ Եթէ այս վկայութիւնից յետոյ ուրիշ բան հարցնես. ահա կանք՝ մեր բոլոր մարմինը յանձնած քո ձեռքը, արա ինչ որ կամենումես։ Քեզանից տանջանք՝ մեզանից յանձնառութիւն. և սուրը քոնը՝ պարանոցը մերը . . . . մեռնենք իբրև մահկանացու՝ որ մեր մահը ընդունուի ինչպէս անմահներինը»։

Ցաղկերտ դեսպաններից այս նամակը ընդունելուց յետոյ հրամայեց կարդալ և լսողները բոլորը գոչումէին պատասխանը. ճարտարապետութիւնից աւելի՝ աներկիւղութեան վերայ էին զարմանում. իսկ աւագանին ու մոգերը այնպիսի վստահութեամբ գրուած նամակից եղրակացրին որ, եթէ հայերը ուրիշ տեղից օգնականութեան յոյս չունենային՝ այնպիսի նամակ ոչ միայն թագաւորին չէին գրիլ, այլ և մոքներովն անգամ չէին անցկացնիլ։

Միհրներսէհ հաղարապետի և մոգպետի խորհրդով թագաւորը յականէ յանուանէ արքունիք կանչեց Հայոց, Վրաց և Աղուանից

մեծամեծներին, որոնք ի նկատի ունելով, թէ Պարսկաստան չրգնալը ապստամբութեան նշան պէտք է համարուի և Պարսկաստանում եղածների կեանքը պէտք է վտանգի ենթարկուի. Սուրբ Յովսէփի ձեռքով նախապէս սուրբ աւետարանի վերայ երդուելով միաբանութեան ուխտ հաստատեցին և ապա ճանապարհ ընկան։ Հայոց կողմից Պարսկաստան գնացողներն էին Վասակ Սիւնի՝ որ 445 թուից հետէ մարզպան էր, Ներշապուհ Արծրունին, Արտակ Ռշտունին, Գագիշոյ Խորխոռունին, Վարդան Մամիկոնեանը, Արտակ՝ Մոկաց, Մանէճ՝ Ապահունեաց, Վահան Ամատունի, Գիւտ Վահեւունեաց, և Շմաւոն Անձևացեաց նախարարները։ Յառաջ, երբ որ Հայոց զօրականները արքունիք էին գնում՝ թագաւորը մեծ պատուով էր ընդունում, մարդիկ էր ուղարկում ընդառաջ, հարցնումէր Հայոց երկրի և ժողովրդի որպիսութիւնն ու խաղաղութիւնը. ինքն անձամբ գնդի հանդէսը տեսնումէր, բայց այս անգամ, այսպիսի արարողութիւններ չեղան։ Զատկի շաբաթ օրը նախարարները ներկայացան թագաւորին որ խոստացաւ մեծ պատուով ու փառքով յետ դարձնել, եթէ հետևեալ օրը արեգակի ծագման ժամանակ իւր հետ ծունր կրկնեն և ասուած խոստովանեն արեգակին. և ընդհակառակն, եթէ նախարարները դիմադարձէին՝ սպառնացաւ մեծամեծ նեղութիւններով կատարել ապ իւր հրամանը։

Նախարարների կողմից սպարապետ Վարդան Մամիկոնեան աներկիւղ վստահութեամբ, զուարթ դէմքով և համեստ խօսքով յիշելով Հայոց հաւատարիմ ծառայութիւնները սկսեալ Նապուհից, պատմեց Հայոց երկրի դրութիւնը, հարկերի կրկնապատիկ առաւելութեամբ արքունի գանձարան մտնելը, ազատ եկեղեցիների հարկի տակ ընկնելը, նախարարների հաւատարմաբար ծառայելը. խոստացաւ իւր կեանքը և տան յետին կարասին Պարսից թագաւորի ու երկրի օգտին յօժարութեամբ դնել. յաւելացնելով—«բայց օրէնքը, որ իմ՝ մանկութիւնից սկսած սովորեցի Աստուծուց թողնել և մարդուց վախենալով փոխանակել՝ անհնար է, քաւ լիցի». իսկ միւս նախարարները ասացին. դու, արքայ, այդ բանը կրկին մեզ մի՛ ասել։ Եկեղեցին ոչ մարդու շինուածք է և ոչ էլ արեգակի տուրք. ոչ թագաւորների պարգև է, և ոչ ճարտարութեան արուեստ. ոչ իմաստունների գիւտ է և ոչ զինուորների աւար։ Նորա հիմունքը ոչ ներքինները կարող են շարժել, և ոչ վերինները

խախտել. և ինչ որ երկինքն ու երկիրը չեն կարող սարսափեցնել՝ թող մարդկանցից ոչ մէկն էլ չը պարծենայ նորան յաղթել։ Ուրեմն ինչ կամենումես, արա. բոլորս էլ պատրաստենք քո բոլոր տանջանքների գործիքներին, որ սպառնացիր ոչ միայն չարչարելու՝ այլև մեռցնելու համար։

Թագաւորը երբ որ լսեց այս խօսքերը, կրկին և կրկին սպառնացաւ Հայաստան երկիրը քար ու քանդ անել, Հայոց կանայքն ու մանուկները խուժաստան տարագրել, եկեղեցիները աւերել և նախարարներին ու մեծամեծներին ոչ թէ իսկոյն սպանել, այլ մեծամեծ տանջանքներով անել բանտերում մաշել։ Միայն ըստ խնդրոյ ոմանց նախարարաց՝ թոյլ տուեց մի քանի օր խորհել։ Այս ժամանակ Թագաւորի ներքին խորհրդականներից մէկը, որ մկրտուած էլ էր, գաղտուկ խորհուրդ տուեց նախարարներին, իրանց աշխարհը վերահաս չարիքներից ազատելու համար գոնէ առ երեսս արեգակին երկրպագութիւն անել և զրադաշտական օրէնքը ընդունել։ Նորա խորհրդին անսացին երեք քրիստոնեայ աշխարհների նախարարներն էլ, երդուելով հայրենիք վերադառնալուց յետոյ միայն զէնքը ձեռքին պաշտպանել քրիստոնէութիւնը։ Այս ուխտը երեք աշխարհի նախարարարներն էլ աւետարանի վերայ, հաստատելուց յետոյ, նոյն ինքն մարդուն ուղարկեցին Թագաւորի մօտ յայտնելու թէ պատրաստեն նորա կամքը կատարելու։ Թագաւորը շատ ուրախացաւ և մեծամեծ պարգևներ տուեց ամեն մէկ նախարարին, ագարակներ և գիւղեր բաշխեց. Թագաւորական զգեստներով զարդարեց նոցա։ Երբ որ նախարարների ուրացութիւնը տեսան արքունիքում եղած քրիստոնեայ զինուորները, շատ տրտմեցին, յանդիմանեցին զանազան խօսքերով, որոնց նախարարները ոչինչ պատասխանել չը կարողացան. վասն զի անհընար էր յայտնել առ երեսս ուրացութեան պատրուակը։ Դեռ նախարարները ճանապարհ չէին ընկել, որ քահանաները բաժանուեցին նոցանից և մէկին, օձիքը պատռած պնդագեսպան ուղարկեցին Հայաստան, ուրացութեան գործը յայտնելու համար։

Իսկ նախարարները Թագաւորի հրամանով վերադարձան իրանց երկիրները հետներն ունենալով շատ պրուձի, եօթն հարիւրից աւելի մոգ ուսուցիչներ, որոնց մոգպետ նշանակուած էր մի մեծ իշխան։ Դեռ Հայաստան չէին հասել, մոգերը վիճակի էին ձգում թէ որ աշխարհը ում բաժին կը հասնի աշակերտելու։

Արքունի հրամանով մի տարուայ ընթացքում պէտք է խափանուէին եկեղեցու կարգերը և պէտք է փակուէին ու կնքուէին սուրբ տաճարների դռները. գրով ու համարով պէտք է արքունիք գրաւուէին եկեղեցու սուրբ սպասներն ու անօթները. քահանաները պէտք է չը համարձակէին տներում սորվեցնել. մենաստաններում գոնվող կանայք և այր մարդիկ պէտք է աշխարհականի հանդերձ հագնէին. նախարարների կանայքը նոցա տղայքն ու աղջկերքը պ'էտք է կրթուէին մոգերի մօտ. սուրբ ամուսնութեան խորհուրդը պէտք է վերանար. փոխանակ մի կնոջ շատ կանայք պէտք է առնէին. ամենամօտ ազգականների ամուսնութիւնը թոյլատրելի պէտք է լինէր. տնային կենցաղավարութեան մէջ պէտք է իշխէր պարսկական սովորութիւնը։

Թէպէտ Պարսից արքունիքի նպատակը այս էր և մոգերն ու մոգպետները կամենում էին շուտով ի գլուխ հանել այս ամենը, բայց Հայոց, Վրաց և Աղուանից նախարարները դեռ միմեանցից չը բաժանուած՝ նորից սուրբ աւետարանի վերայ եղած միաբանութեամբ միմեանց օգնելու ուխտը հաստատեցին, և իւրաքանչիւրը իւր բաժնի մոգերովը գնացին իրանց աշխարհները։ Ցազկերտի մօտ պատանդ էին մնացել Վրաց Աշուշա թագաւորը և Վասակ Սիւնու երկու որդիքը Բարիկ և Ամիրներսեհ։

Հայոց գունտը մոգերի հետ դեռ Հայաստան չէր հասել, որ եպիսկոպոսների ժողովը գուժկանից նախարարների ուրացութեան և մոգերի գալստեան լուրը լսելով Ս. Յովսէփի հրամանով՝ ամեն մի եպիսկոպոս գնաց իւր վիճակը, և գիւղերում ու ագարակներում, աւաններում ու լեռնային ամուր գաւառներում քորեպիսկոպոսներ նշանակեցին. որոնք քարոզում ու քաջալերում էին արանց և կանանց՝ եկեղեցին պաշտպանելու համար զենուիլ։ Բոլորի նշանաբանն էր. «Ձեռն եղբօր հարազատի՝ ի մերձաւոր իւր լիցի, որ անցեալ իցէ ըստ ուխտ պատուիրանին Աստուծոյ։ Օրէնք աստուածային կայցեն թագաւոր ի վերայ ամենայնի և ի նմին օրինաց ընկալցին յանցաւորք զպատիժս»։

Չորրորդ ամսին Հայոց գունտը հասաւ Անգղ գիւղաքաղաքը. եկեղեցու ուխտը, որ ընդ առաջ էր դուրս եկել խաչով և Ս. Գրիգորի մասունքով, հաւաստեաւ իմանալով նախարարների ուրացութիւնը, յետ դարձաւ. բոլորը և նոյն ինքն հարազատները խորշում էին նոցանից. տեսարանը ցաւալի էր. առ երեսս ուրա-

ցողները կամենումէին իրանց սրով մեռցնել, որովհետեւ ոչ ոք չէր կամենում՝ նոցա սեղանակից լինել, ոչ կինը, ոչ որդին, ոչ ազատը. ոչ ծառան և ոչ սպասաւորը։ Սուգ էին մտել եպիսկոպոսներն ու եկեղեցու ուխտը. իսկ մոգերը անդադար ստիպումէին եկեղեցին տարուշան դարձնել։

Վարդան Մամիկոնեանը իւր կեղծ ուրացութիւնը իւր ընտանեաց պատմելուց յետոյ կամեցաւ նոցա հետ Տայնաստան գնալ և արդէն հասել էր Բագրեւանդայ Արամանայ գիւղը. բայց Վասակ Սիւնին, միւս նախարարներն ու եպիսկոպոսները գրեցին նորան որ յետ կենայ իւր խորհրդից, յայտնելով միանգամայն որ այն դառն հարուածից, որ պատրաստուած է ամբողջ ազգի համար, պէտք է ամեն մինը իւր գլուխը չազատի, այլ պէտք է ըստ կարեաց՝ աշխատի ազգի և եկեղեցու փրկութեան համար, որից յետ կենալը վատութիւն է։ Վարդանին ներկայացրին այս թուղթը Ղեւոնդ, Վաղարշապատի Երեմիա և Մրենոյ Խորէն երէցները, որոնք խօսքին հաւատալով և սուրբ աւետարանը տեսնելով՝ որի վերայ միաբանութեան ուխտ էին կապել, իւր Հմայեակ և Համազասպեան եղբայրների հետ վերադարձաւ։ Որպէս զի պատանդներին վնաս չը հասնի՝ ուրացեալները կեղծ ուրացութեան քօղը չէին վայր ձգում՝ և ապստամբութիւնը ուշացնումէին, թէպէտ և Վահան Ամատունին թշնամութիւն ունենալով Վասակի հետ ատանց փոյթ ունենալու նորա պատանդ որդւոց համար՝ շտապեցնումէր ապստամբութիւնը։

(Կը շարունակուի).

Յ. Վ. Մ.